



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

# Դիտարկումներ ներկայի ներածականի շուրջ. Մաս Բ



31

Մարտի, admin  
2022

Դիտարկումներ ներկայի ներածականի շուրջ.  
Մաս Բ

Ո՞վ է բարձրացնելու մեր դրոշմը:

Պատմության ընթացքում մեր հայրենիքին տիրացած օտարները մեզ ենթարկեցնելու հարցում ընկալել են կարևորը: Կասեցնել հայոց անկախ պետականությունը

պարբերաբար վերակենդանացնող երեք հիմնական ուժերի վերարտադրման գործընթացը: Այդ ուժերը նաև հաստատուն շարժ են ապահովել հայոց անկախ պետականության զարգացման համար՝ ունենալով միմյանց փոխլրացնող գործառույթներ: Նրանց գործունեության հիմքում ընկած է եղել մեկ հիմնական կիրառական սկզբունք. կազմակերպում: Սկզբունքները պետք է դիտարկել իրենց ամենալայն իմաստներով հանդերձ: Կազմակերպումը ընկած է եղել հասարակական-քաղաքական շրջանակի ուսերին: Նրանք նաև կրել են գաղափարական հենքն ապահովելու գործառույթ: Այս խմբի մեջ է ամբողջացել հայ հասարակության կառավարչական և մտավորական ներուժը: Իշխանության համակարգի ներկայացուցիչներ հանդիսացող ազնվականությունից մինչև ժամանակակից քաղաքական շրջանակներ, մտավորականության «դաս»-ին պատկանող առաջին գրիչներից ու հոգևորականներից մինչև գիտակրթական-մշակութային ոլորտի լուսավորյալներ պարբերաբար լծվել են տարբեր անկյուններից հայոց անկախ պետականությունը վերածնելու և հզորացնելու գործին: Այս ուժը պայմանականորեն դարձել է մեր մարմնի գլուխը: Մյուս երկու կարևոր ուժերը գործնականում ապահովել են «գլխի» առաջ բերած ծրագրերի իրականացումը: Նրանցից երկրորդը մեր հավաքական բռնացքն է: Ուժ,

որի հիմքում կանգնել են բանակայինները՝ բառի ամենալայն կիրառմամբ: Նրանց շարքերում հաճախ տեսել ենք աշխարհագրայինից մինչև կադրային զինվորականի: Առաջին երկու շարժիչ ուժերի զարգացումն ապահովել են տնտեսական ճակատի ներկայացուցիչները: Դատարկ գրպանը լեցուն պահելու ձգտումը հաճախ է «անվտանգության բարձիկի» դեր խաղացել: Այս երեքը միասին հիրավի լուծել են համազգային մասշտաբների խնդիրներ: Նրանց հաջողվել է ձևավորել հավաքական շահ, որը մոլիչ հոսանքի պես առաջ է տարել հայ հասարակության բոլոր շերտերին: Նրանց հավաքական կերպարների մեջ կարելի է տեսնել մեզ հայտնի հայոց մեծ ու փոքր առաջնորդներին: Մարդկանց, որոնցից յուրաքանչյուրն իրեն բաժին հասած ճակատում ծավալել է իր և հայ հանրության շահերի սպասարկման համար անհրաժեշտ գործունեություն: Նրանք են բարձրացրել մեր դրոշմ՝ առաջնորդելով մեզ: Եվ նրանք է, որ բարձրացնելու են մեր դրոշմը:

**Ի՞նչ է եղել դրոշակակիրներին:**

Երբևէ մեզ տիրացած օտարները ժամանակ առ ժամանակ պայքարել են այս երեք ուժերի դեմ: Փորձել են կասեցնել նրանց հավաքական ամբողջությամբ գործելու ձգտումը: 1915 թ.-ից հետո պարզ դարձավ, որ անգամ

ոչնչացման սպառնալիքն անարդյունք է, եթե հայության շարքերում դեռ ծլում են այդ ուժերի սերմերը: Ուրեմն, նպատակն ավելի քան հստակ է: Ինչո՞ւ փորձել անարդյունք ոտնատակ անել մի ամբողջ ազգ, եթե կարելի է խեղել այդ նույն ազգը հաստատուն պահող ուժերին և ենթարկեցնել ազգին: Գաղափարական «...իզմ»-երի ալիքներից մինչև սեփական շահը գերադասելու հրամցված արժեքները ժամանակի ընթացքում տվել են սպասված արդյունքներ: Գոնե այսպես են կարծել նույն օտարները: Բազմաթիվ են օրինակները: Սելևկյան ուժերով հայոց անկախ պետականությունն ավիրած Արտաշեսից մինչև խաչակիրների բարեգթությունը շահած Կիլիկիայի Լևոնը: Միևնույն ժամանակ, որքան էլ տարօրինակ է, նույն Արտաշեսն է, որ դարձել է Տիգրան ծնած անկախ Հայաստանի վերածնունդի կերտողը: Նույն Լևոնն է, որ տարածաշրջանի հզոր տերության՝ Կիլիկյան հայոց թագավորության, հիմնադիր արքան է հանդիսացել: Ուստի, ակնհայտ է, որ օտարների ներմուծած արժեքների արդյունքում հայոց դրոշակակիրների հետընթացը չի հանգեցրել այդ ուժերի իսպառ ոչնչացմանը: 1045 թ.-ից հետո 873 տարով լայն թափ առած այս գործընթացը Հայկական լեռնաշխարհում միևնույն է չի ավարտվել օտարի մշակած սցենարով: Մեզանում կրկին ի հայտ են եկել դրոշակակիրներ և բարձրացրել մեր դրոշը: Ուրեմն, ո՞րն է գլխավոր հարցը: Մի բան, որը ոչ միայն մենք ենք

բարձրաձայնում, այլն նաև՝ նույն օտարները: Մենք. թե ինչու դրոշակակիրների կերտման ու կայացման գործընթացում չկա կանխատեսելի, որակական ու թվական անհրաժեշտ կազմի շարունակականություն: Օտարները. թե ինչու, թեկուզ մեկընդմեջ, ի հայտ են գալիս բոլոր ծրագրերը խաթարող դրոշակակիրները: Երկու կողմերի հարցադրումների մեջ ընդհանուրն այն է, որ զարգացումներից անկախ դրոշակակիրները հայտնվում են: Ուստի, գլխավոր հարցը ոչ թե նրանց բացակայության, այլ՝ ժամանակի շղթայի մեջ անհրաժեշտ թվակազմով, որակով և պարբերականությամբ մեր հասարակության մեջ չհայտնվելու մեջ է: 100-ամյակը մեկ առաջնորդների սպասելիս մենք շատ զոհողություններ ենք տալիս: Այդ զոհողությունները հաճախ հանգեցնում են անդառնալի հետևանքների, որոնք անասելի նվազեցնում են մեր հավաքական հնարավորությունների պաշարը: Այդ կերպ հաճախ անլուծելի խնդիրներ ստեղծելով ապագայի դրոշակակիրների համար: Ուստի, գլխավոր հարցի լուծումը մեր հեռանկարի առումով ավելի առաջնային է, քան մեզ հայտնի մնացած հարցերը միասին վերցրած: Մեզ անհրաժեշտ է երեք ուժերի դրոշակակիրների անդադար վերարտադրող համակարգ, որի հիմքում պետք է լինի սեփական դրոշը գործնականում բարձր պահելու կարողությունը, այլ ոչ թե պատրաստականությունը:

*Խմբագրական – Միեր Յովհաննիսյան*